



«Քայլ առ քայլ» բարեգործական հիմնադրամ

«Նախադպրոցական հաստատության մանկավարժական
աշխատողների մասնագիտական կարողությունների և
հմտությունների զարգացման» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Ազգային տոների, ծեսերի կազմակերպման
առանձնահատկությունները կրթական գործընթացում

Դաստիարակ՝ Նարինե Ալթունյան

Մանկապարտեզ՝ «Արագափ գյուղի մանկապարտեզ» ՀՈԱԿ

2023թ.

ԲՈՎԱՆԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....	3
ԳԼՈՒԽ 1	4
Ազգային տոների, ծեսերի առանձնահատկությունները.....	4
1.1 Ամանոր	6
1.2 Տյառնընդառաջ կամ Տրնդեզ.....	7
1.3 Բարեկենդան	8
1.4 Սուրբ Զատիկ	8
1.5 Վարդավառ.....	9
ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԸ.....	10
Պարապմունքի պլան	14
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ	19
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ	21

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Արդի հասարակության համար կարևորագույն խնդիրներից մեկը ազգային մշակույթի յուրացումն է՝ ավանդույթներ, ծեսեր, տոներ: Քանի որ 21-րդ դարի սկզբում հայտնվել ենք մի տխուր փաստի առջև, մենք կորցրել ենք ազգային շատ կարևոր արժեքներ և փորձում ենք վերականգնել կորցրածը: Այս գործը պետք է սկսել վաղ հասակից: Երեխան դաստիարակվում և սովորում՝ յուրացնելով մեծերի փոխանցած մշակույթը, որով էլ պայմանավորված է ընտրված թեմայի արդիականությունը: Յուրաքանչյուր մանկավարժի պարտքն է պահպանել և սերնդից սերունդ փոխանցել:

Ծեսերին պետք է նոր կյանք տալ, բայց նոր կյանք տալու համար հարկավոր է նախ շատ լավ յուրացնել ավանդականը, ճանաչել այն միջավայրը որտեղ ստեղծվել են դրանք: Նոր կյանք տալ՝ չի նշանակում ակունքից այնքալ հռոմանալ, որ դառնա ոչ ծես: Յուրաքանչյուր ծես, ծիսական գործողություններից բացի ունի տոնական մաս, որտեղ կարելի է կատարել ժամանակակից բարձրարժեք երգեր ու պարեր:

Հետազոտական աշխատանքի նպատակն է՝ ամրապնդել և ընդլայնել իմացությունն ազգային տոների և ծեսերի կազմակերպման առանձնահատկությունները կրթական գործընթացում:

Կառուցվածքը և ծավալը՝ հետազոտական աշխատանքն ունի ներածական մաս, տեսական և հետազոտական մաս, եզրակացություններ և գրականության ցանկ:

Գործնական աշխատանքը ցույց տվեց, որ նախադպրոցական տարիքի երեխաներն ունեն մեծ հետաքրքրություն իմանալ մեր մշակույթի մասին ավելի շատ տեղեկություն և իմանալ անցյալ ժամանակների պատմությունն ազգային տոների և ծեսերի մասին:

ԳԼՈՒԽ 1

Ազգային տոների, ծեսերի առանձնահատկությունները

Մարդու կյանքում զարգացման բոլոր փուլերը փոխապայմանավորված են ,և ամեն բան սկսվում է մանկությունից:Այն ինչ երեխան ծեռք է բերում մանկության շրջանում, ուղեկցում է նրան ողջ կյանքում : Երեխաների լիարժեք, համակողմանի զարգացման համար անհրաժեշտ է օգտագործել բոլոր հնարավոր իրավիճակները:

Տոնական հանդեսների ու ծեսերի կազմակերպումն և անցկացումը մանկապարտեզում տարվող մանկավարժական աշխատանքների կարևոր մասն է:Նրանց շնորհիվ իրագործվում են երեխաների բարոյական ,մտավոր, գեղագիտական աշխատանքային ,ֆիզիկական դաստիարակության խնդիրները:Տոնն այս դեպքում պետք է ունենա ոչ միայն ժամանցային, այլև զարգացնող, դաստիարակչական գործառույթներ:

Արվեստի տարբեր ճյուղերի համատեղումը տոնական հանդեսների և ծեսերի ժամանակ ներգործուն ազդեցություն է ունենում երեխայի զգայական աշխարհի և գիտակցության զարգացման վրա:

Տոնական հանդեսների և ծեսերի նախապատրաստման ու ճիշտ կազմակերպումը մեծապես նպաստում է նախադպրոցական տարիքի երեխաների բարոյական դաստիարակության գործին:Երեխաները համախմբվում են,ապրում են ընդհանուր հետաքրքրություններով,նրանց մեջ մշակվում է վավերակերպի կուլտուրա,կարգապահություն:

Մեծ է ժողովրդական ստեղծագործությունների,հայրենիքին ու բնությանը,աշխատանքին նվիրված երգերի ու բանաստեղծությունների դերը հայրենասիրական ազնիվ զգացումների զարգացման գործում:

Տոնը հիանալի իրավիճակ է խոսքի ակտիվացման , նրա հաղորդակցական ֆունկցիայի զարգացման համար: Այն ընդլայնում է երեխաների մտահորիզոնը,զարգացնում

հիշողությունը, երևակայությունը, որը շատ կարևոր է այդ տարիքի երեխաների համար, նպաստում նրանց մտավոր զարգացմանը:¹

Գեղագիտական դաստիարակության կարևոր միջոցներն են միջավայրի գեղարվեստական ձևավորումը, երեխաների մտքին ու հոգուն հարազատ, բարձրարժեք ստեղծագործություններով հագեցված ծրագիրը, ելույթների բարձր մակարդակով և գեղեցիկ կարարումը:

Երաժշտական խաղերը, պարերը ամրապնդում և զարգացնում են երեխաների օրգանիզմը, նպաստում շարժումների ներդաշնակությանը:

Յուրաքանչյուր մանկավարժ ով մուտք է գործում կրթական միջավայր, ունի առաքելություն՝ այն է կրթելու և դաստիարակելու հայրենիքին արժանի, բարոյական, ազգային և ավանդական արժեքները բարձր պահող անհատներ: Մշակույթը չէր պահպանվի և սերնդեսերունդ չէր փոխանցվի, եթե գոյություն չունենային դրան նպաստող որոշակի միջոցներն ու հանգամանքները: Դրանցից կարող ենք առանձնացնել պատմության ընթացքում ձևավորված ծեսերը: Ծես նշանակում է նվիրում, ընտելացում տվյալ կրոնին և արժեքների համակարգին, ազգությանը, պետությանը: Ծեսերն աչքի են ընկնում իրենց պատմական և ճանաչողական արժեքներով: Դրանք ստեղծվում են ոչ թե պատահական դեպքերի շուրջ, այլ ժողովրդի համար կենսական նշանակություն ունեցող իրադարձությունների կապակցությամբ: Ծեսերը մշակույթի պահպանման և փոխանցման մեջ կարևոր դեր և նշանակություն ունեն: Ծեսերի անցկացման նպատակը ոչ միայն լինել մասնակից, այլ նաև ծեսերի ավանդույթների պոխանցողը:

Հայ ազգային տոներն ունեն ծիսական արարողակարգ, որոնցից են Նոր տարին, Սուրբ Ծնունդը, Տեառնընդառաջը, Բարեկենդանը, Ծաղկազարդը, Զատիկը,

Համբարձումը, Վարդավառը: Դարերի ընթացքում հարատևած ծեսերի բովանդակությունն

¹ Апполонова Н.А. Приобщение дошкольников к русской национальной культуре / Н. Апполонова // Дошкольное воспитание, – 1991. – № 4.

իր բազմակողմանի ազդեցությունն է ունեցել առօրյա կյանքի, կենցաղի, հոգեբանության և աշխարհայացքի վրա:²

1.1 Ամանոր

Ազգային տոներն ու ծեսերը, ծիսական միջոցառումները սկսվում են Նոր տարվա ծեսից: Տոնն ունեցել է տարբեր անուններ՝ Ամանոր, Տարեմուտ, Տարին Գլուխ, Նոր տարի, Կաղանդ, Կաղինդ, Կալանտար, Կալոնտար:

Հայերն այդ տոնը նշում են անհիշելի ժամանակներից սկսած: Մեր հները Ամանորն անվանել են նաև այլ անուններով. Նավասարդ, Տարեմուտ, Տարեգլուխ, Կաղանդ, Լուխ, Նոր տարի: Հազարամյակների ընթացքում տոնը նշելու ժամանակը փոփոխվել, հետ ու առաջ է ընկել: Իսկ անցյալում հայոց նախնիները Ամանորը տոնել են գարնան զարթոնքին Արեգ ամսին մարտի 21-ի գիշերահավասարի օրը: Դա պատահական ընտրություն չէր. հայը նոր տարվա հաջողությունն ու բերքառատ լինելը կապել է գարնան զարթոնքի հետ:

Տոմարական փոփոխությունների հետևանքով հայոց Նոր տարին տեղափոխվել է Նավասարդի 1-ը, այսինքն օգոստոսի 11-ը: Ըստ ավանդության, Հայկ նահապետը Հայոց ձոր գավառում սպանել է բռնակալ Բելին՝ ազատություն պարգևելով իր տոհմին ու հետնորդներին: Ենթադրաբար դա տեղի է ունեցել մ. թ. ա. 2492թ. օգոստոսի 11-ին: 18-րդ դարում, Սիմեոն Երևանցի կաթողիկոսի օրոք, որպես Նոր տարվա սկիզբ ընդունվեց հունվարի 1-ը (համապատասխանեցնելով քրիստոնեական մի շարք երկրներում ընդունված տարեսկզբի հետ): Միայն 20-րդ դարի սկզբներից համընդհանուր դարձավ հունվարի 1-ը, որպես տարվա սկիզբ, տոնելը:

²<https://rimarstakyan.wordpress.com/2020/02/15/%D5%B0%D5%A1%D5%B5%D5%AF%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6-%D5%AE%D5%A5%D5%BD%D5%A5%D6%80%D5%A8/>

Մանկապարտեզում ամանորյա ծեսը սկսվում է դեկտեմբերի 1-ից:Դաստիարակը այդ մասին հայտնում է երեխաներին,միասին քննարկում են,թե ինչպես են անցկացնելու ծեսը .չէ՞ որ այն մի օր չէ,մի տևական շրջան:Դաստիարակը ծեսի ծրագիրը քննարկում է ծնողների հետ:

Սկսում են ժապավեններ,ուլունքներ,կոճակներ,բազմագույն փայլուն թղթեր,այլ առարկաներ հավաքել,տոնական երգեր,օրհնանքներ,ասերգ սովորել-բեմադրել,տոնական զարդարել խմբասենյակը,տոնական հագուստներ պատրաստել:

Որևէ գործողությամբ զբաղվելիս միացնում են ամանորյա երգեր,երեխաները սկսում են աշխատել երգերը լսելով և երգելով:

Խմբասենյակում կամ բակում ծառ են զարդարում . տոնածառը միայն եղևնին չէ,ցանկացած ծառ կարող է դառնալ տոնի ծառ:

Ամենակարևորն այդ օրերին տոնական տրամադրությունն է,տոնի սպասումը,տոնական իրարանցումը:

1.2 Տյառնընդառաջ կամ Տրնդեզ

Տյառնընդառաջ նշանակում է «ելնել Տիրոջն ընդառաջ», տարածված է նաև Տերընդեզ, Տըրընդեզ, Տըրընտես, որոնք ծագել են «Տերն ընդ ձեզ» անվանումից: Հայոց Եկեղեցու կանոնի համաձայն՝ տոնի նախօրեին՝ երեկոյան ժամերգությունից հետո, կատարվում է նախատոնակ: Այն ավետում է Տերունի տոնի սկիզբը: Սովորաբար նախատոնակի արարողության ավարտին կատարվում է Անդաստանի արարողություն, որի ընթացքում օրհնվում են աշխարհի 4 ծագերը: Անդաստանին հաջորդում է մոմերի օրհնության արարողությունը: Եկեղեցուց վերցրած կրակով եկեղեցիների բակերում վառվում են խարույկներ՝ իբրև Քրիստոսի լույսի խորհրդանիշ:

Երեխաներին այս ծեսի խորհուրդի մասին մանրամասն տեղեկություններ պետք չի հաղորդել:Պետք է ասել ,որ դա հին հայկական տոն է ,որի ժամանակ մարդիկ թոել են կրակի վրայով,հավատացել,որ կրակը վառում է բոլոր վատ բաները:Այդ տոնը նվիրվել է

նոր ամուսնացած հարս ու փեսային:Բոլորը նրանց օրհնում են, բարեմաղթանք ասում,երջանկություն և ուրիշ լավ բաներ ցանկանում, պարում, ուրախանում:

1.3 Բարեկենդան

Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու շարժական տոներից, նշվում է Սուրբ Սարգսի տոնից մինչև Մեծ պաս ընկած ժամանակաշրջանը:

Բարեկենդան նշանակում է բարի կենդանություն: Այն ուրախության ու զվարճանքի օր է, հիշեցնում է Ադամի և Եվայի դրախտային կյանքը, երբ նրանք ապրում էին վայելքի ու անհոգության մեջ:

Բարեկենդանը հայկական հին տոներից է:Դա հայերի ամենաուրախ տոնն է եղել:Մարդիկ մի շաբաթ կերել-խմել են,երգել,պարել,ուրախ խաղեր են խաղացել,դիմակահանդեսներ են կազմակերպել:Այդ տոնից հետո պասն է սկսվել.մարդիկ չեն կերել այն,ինչ կենդանիներից են ստացել՝յուղ,,միս,ձու,կաթ,մածուն:

1.4 Սուրբ Զատիկ

Զատիկ կամ Հիսուս Քրիստոսի հրաշափառ Հարության տոն՝ քրիստոնյա եկեղեցիների, այդ թվում նաև Հայ Առաքելական Եկեղեցու հնագույն և գլխավոր տոնը, հինգ տաղավար տոներից մեկը:

Զատիկը շարժական տոն է, այսինքն յուրաքանչյուր տարի նրա նշման օրը փոխվում է: Հայ առաքելական եկեղեցին այն նշում է գարնան գիշերհավասարին հաջորդող լուսնի լրման առաջին կիրակի օրը, որն ընկնում է մարտի 22-ից հետո մինչև ապրիլի 26-ը (35 օր) ժամանակահատվածի վրա:

Ամբողջ քրիստոնյա աշխարհում Զատիկը համարվում է Քրիստոսի հարության տոնը: Զատիկ անվանումն առաջացել է զատել բառից, որը նշանակում է զատվել և հեռանալ մեղքերից:

Զատկի հետ առնչվող գլխավոր արարողությունները սկսվում են Ավագ շաբաթվա շաբաթ օրը և ավարտվում երկուշաբթի: Շաբաթ երեկոյան մատուցվում է Քրիստոսի հարության ճրագալույցի կամ ճրագալույսի պատարագ, որով վերջանում է Զատկին նախորդած յոթ շաբաթ տևած Մեծ Պասի շրջանը: Պատարագի ավարտին հավատացյալները միմյանց ողջունում են «Քրիստոս հարյալ ի մեռելոց» ավետիսով և ստանում «Օրհնյալ է հարությունը Քրիստոսի» պատասխանը:

Զատիկը տոնվում է ներկված հավկիթներով, և շատ արևելյան ուղղափառ քրիստոնեության հետևորդների մոտ՝ պասկայով: Հայերի մոտ տեղի են ունենում նաև հավկթախաղեր: Ձուն զատկական տոնում գրավում է ամենակարևոր տեղը, քանի որ անմիջականորեն առնչվում է տոնի ծիսական գաղափարախոսության հետ: Ձուն հայոց ավանդական կենցաղում համարվել է գարնան և պտղաբերության, ինչպես նաև հարության խորհրդանիշը, քանզի իր մեջ պարունակում էր վերածննդի գաղափարը: Որպես նոր կյանքի խորհրդանիշ՝ կապվում է գարնան, բնության զարթոնքի հավատալիքների հետ: Իսկ ձվախաղի իմաստը հինը տապալելու և նորին անցնելու գաղափարն ուներ:

1.5 Վարդավառ

Վարդավառ կամ Վարդեվառ, որպես քրիստոնեական տաղավար տոն՝ Քրիստոսի այլակերպություն կամ Քրիստոսի պայծառակերպություն, հայ ժողովրդական նախաքրիստոնեական և քրիստոնեական տոն, ըստ եկեղեցական տոնացույցի նշվում է Զատիկից 14 շաբաթ կամ 98 օր հետո:

Վարդավառը հայկական ավանդական տոների շարքում ամենասիրելիներից մեկն է, ամառային ամենասիրված տոնը: Քաղաքներում Վարդավառն ավելի շատ համարվում է մանկական տոն, երեխաները հենց այդպես էլ ասում են «ջրոցի խաղալ» կամ «Վարդավառ խաղալ», այսինքն՝ ուրախ ջրել անձանոթներին և անցորդներին:

Գլուխ 2

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԸ

Հետազոտական աշխատանքն անցկացրել են Արագածի գյուղի մանկապարտեզում ավագ խմբում:

Ավանդական ձևով պարապմունքն իրականացնելուց հետո նկարելի էր ,որ երեխանների մեծամասնությունը բավարար պատկերացում չկազմեցին թոմայի վերաբերյալ :Ուստի կազմել և իրականացրել են պարապմունք ԽԻԿ համակարգով:

Թեման ընրել են <<Ամանոր>>:

Նպատակը.

- ամրապնդել և ընդլայնել Ամանորի մասին տեղեկությունը
- Հետաքրքրություն առաջացնել,համեմատել հին և ներկա ժամանակները նշելով՝ թե մեր նախնիներն ինչպես են տոնել Ամանորը,ինչպես են զարդարել տոնածառը
- Ուսուցանել Կաղանդ,Նավասարդ,Ամանոր բառերը

Ընթացքը

Մանկապարտեզում ամանորյա տոնը սկսվում է դեկտեմբերի մեկից:Այդ օրվանից սկսած խմբում տիրում է ամանորյա նախատոնական տրամադրություն:

Գեղեցիկ ,փայլուն,գույնզգույն տոնածառը զարդարում է խմբասենյակը,երեխաները շատ ուրախ են և ոգևորված :

Խթանման փուլ

Երեխաներին հարցրեցի.

-Ի՞նչ է նոր տարին:

<<Մտածիր-զույգ կազմիր-արտահայտվիր>> ռազմավարության միջոցով երեխաները պետք է մտքեր փոխանցեցին զույգերով և յուրաքանչյուր երեխա իր զույգի լսածի վերաբերյալ մեկ հարց տվեց:

Այնուհետև ընդհանուր երեխաներ խմբից 2-3 հոգի հայտնեն իրենց կարծիքը:

Երեխաները պատասխանեցին ,որ Ամանորը դա երգն ու պար է,անակնկալ է,Ձմեռ պապ,տոնաճառ,հրավարություն,նվերներ:

Իմաստի ընկալման փուլ

Երեխաներին բաժանեցի 2 խմբի,հետևյալ ձևով.

Երեխաների քանակով ամեն թղթի վրա նախապես նկարել էի մեկական տոնաճառ և տոնաճառի խաղաղալիք:Այդ նկարները դրեցի պարկի մեջ:Երեխաներին առաջարկեցի ,որպեսզի հերթով մոտենան ,պարկից հանեն մեկ նկար:Այնուհետև տոնաճառի նկարով երեխաները նստեցին աջ կողմի սեղաների մոտ,տոնաճառի խաղալիք նկարով՝ ձախ: Այնուհետև դադարներով պատմեցի <<Ամանոր >> պատմվածքը:

Յուրաքանչյուր դադարից հետո հարցրեցի և խմբերով քննարկումից հետո 2-3 հոգուն խնդրեցի ,որ պատմեն թե ինչի մասին են խոսել:

Երեխաները շատ բարձր դրամադրությամբ,շատ ոգևորված պատմում էին, թե ինչի մասին էին խոսում:

Այն հարցին,թե ինչով կզարդարեին տոնաճառը մեկը ասաց,թե կկտրտեմ թուղթը, կսոսինձեմ ,կստանամ փաթիլ և կկախեմ տոնաճառից,մյուսը՝ձմեռուկով կզարդարեմ,հաջորդը՝թուղթը այնպես կճմռթեմ,որ կդառնա գնդակ,թելով կկապեմ և կզարդարեմ:

Երեխաների երևակայությունն անսահման էր,պատասխաններն էլ բազմազան:

Տեքստի ավարտելուց հետո քննարկման միջոցով ամփոփել օգտագործելով հետևյալ հարցերը.

- Ի՞նչ սովորեցիք:
- Ի՞նչ նոր բան իմացաք:
- Ինչ կավելացնեք:

Ամփոփելուց հետո երեխաներին հարցրեցի,թե ամենաշատը որ հատվածը հավանեցին և ինչու,հետո խնդրեցի,որպեսզի զույգերով պատմեն միմյանց:

Ֆիզ դադար

Ֆիզ դադարի միջոցով երեխաները թարմացան և չրերով, մրգերով, ընկույզով տոնածառի խաղալիքներ պատրաստեցինք ու կախեցինք տոնածառից, կազմեցինք շրջան տոնածառի շուրջ և երգեցինք <<Համով-հոտով տոնածառ>> երգը³:

Անդրադարձ

Վերլուծեցինք կատարած քայլերը և ամփոփեցինք ձեռք բերած գիտելիքները:

- ✓ Հարցնել, թե ի՞նչ են արել այսօր:
- ✓ Ինչի՞ մասին ենք խոսացել:

Քայլ առ քայլ վերհիշեցինք, անդրադարձ կատարեցինք, ինչ էլ նպաստեց երեխաների մոտ թեմայի ամրապնդմանը:

Կշռադատման փուլ

Այս փուլում ես կիրառի <<Դեմ առ դեմ շրջաններ>> ռազմավարությունը:

Երեխաներին բաժանեցի 2 խմբի: Առաջին խումբը շրջան է կազմում և շրջվում են 180*-ով այնպես, որ դեմքով կանգնեն շրջանից դուրս: 2-րդ խումբը շրջան կազմեց առաջին խմբի շուրջը: Երեխաները կանգնեցին իրար դիմաց: Հրահանգ տվեցի և 2 շրջանները սկսեցին պտտվել դեպի աջ (ստացվեց իրար հակառակ ուղղությամբ: Այնուհետև տվեցի հրահանգ <<Կանգ առ>>, երեխաները անմիջապես կանգնեցին: Այդ ժամանակ հրահանգ տվեցի <<Ձույգ կազմիր>>, երեխաները զույգ կազմեցին իրենց դիմաց կանգնած երեխայի հետ: Այնուհետև խնդրեցի յուրաքանչյուր զույգ զրուցեն միմյանց հետ հետևյալ թեմայի շուրջ՝ <<Մի բան, որ ինձ դուր եկավ այս պատմությունից և կապտմեմ տանը>>

³ <https://www.youtube.com/watch?v=HfB1nU3FVx8>



Այս դասի ընթացքին մասնակցել տնօրենը :

Կից ներկայացնում եմ պարապմունքի պլանը և տնօրենի կատարած դիտարկման արդյունքները:

Պարապմունքի պլան

Պարապմունք	Խումբ	Թեմա	Տևողություն
Ինտեգրված. Խոսքի զարգացում և երաժշտություն	5-6 ավագ խումբ	Ամանոր	2 պարապմունք
Նպատակը	<ul style="list-style-type: none">• Ընդլայնել իմացությունն Ամանորի մասին• Ուսուցանել Կաղանդ, Նավասարդ, Ամանոր բառերը• Հետաքրքրություն առաջացնել ,թե ինչպես են• Զարգացնել միմյանց լսելու և ըստ էության հարցեր տալու հմտությունները		
Ուսումնական նյութեր	<ul style="list-style-type: none">• Ժապավեններ, ընկույզներ, չրեր, մրգեր, թել, տոնածառ		
	Անհատական, զույգերով, փոքր խմբերով, մեծ խմբով		
Ընթացքը			
Իթանման փուլ	<ul style="list-style-type: none">• Դաստիարակը հարցնում է . ի՞նչ գիտեն Նոր տարվա, տոնածառի մասին: Ի՞նչ է Նոր տարի:• <<Մտածիր-զույգ կազմիր-արտահայտվիր>>ռազմավարության միջոցով երեխաները մտքեր են փոխանակում զույգերով• Յուրաքանչյուր երեխա իր զույգի լսածի վերաբերյալ տալիս է մեկ հարց• Մեծ խմբով աշխատանք: 2-3 երեխա հայտնում են իրենց կարծիքը		

<p>Իմաստի ընկալման փուլ</p>	<ul style="list-style-type: none"> • Դադարներով ընթերցանություն . երեխաներին բաժանել 2 խմբի: • Յուրաքանչյուր դադարից հետո դաստիարակը հարց է տալիս և երեխաները խմբերում քննարկում են: • Յուրաքանչյուր դադարից հետո դաստիարակը խնդրում է 2-3 հոգու պատմել ,թե ինչի մասին են խոսել: • Տեքստի ավարտելուց հետո քննարկման միջոցով ամփոփել օգտագործելով հետևյալ հարցերը . <ul style="list-style-type: none"> -Ի՞նչ սովորեցիք: - Ի՞նչ նոր բան իմացաք: - Ինչ կավելացնեք: <p>• Անհատական աշխատանք .</p> <p>-Մտածիր,թե պատմվածքի ո՞ր հատվածը քեզ դուր եկավ և ինչու:</p> <p>Զույգերով-միմյանց պատմել ,թե որ հատվածն է ընտրել և ինչու:</p>
---------------------------------	---

	<p>Ֆիզ դադար</p> <p>Միացնել ամանորյա երաժշտություն, երեխաների հետ կատարել մի քանի երաժշտությանը համահունչ շարժումներ:</p> <p>-Նախորոք սեղաներին պետք է դրված լինեն ժապավեններ, ընկույզներ, չրեր, մրգեր, թել</p> <p>երեխաների քանակով: Երեխաներին հանձնարարել ընկույզներից, չրերից, մրգերից պատրաստել տոնածառի խաղալիքներ:</p> <p>-Պատրասված տոնածառի խաղալիքները կախել տոնածառի վրա:</p> <p>-Տոնածառի շուրջ շրջան կազմել և երգեն <<Համով-հոտով տոնածառ>> երգը</p>
Անդրադարձ	Վերլուծել կատարած քայլերը և ամփոփել ձեռք բերած գիտելիքները:
Կշռադատման փուլ	<ul style="list-style-type: none"> Մի բան ,որ ինձ դուր եկավ այս պատմությունից և կպատմեմ տանը: Դեմ առ դեմ շրջաններ

ԱՄԱՆՈՐ

Հայերը Ամանորը նշել են անհիշելի ժամանակներից: Ամանորը Հայաստանում դիմավորում են ընտանիքի հետ, առատ սեղանի շուրջ, դիմավորում են Ձմեռ կամ Կաղանդ պապերին՝ Ձյունանուշի հետ կամ առանց նրա, հնչում են հայկական ժողովրդական և ժամանակակից երգեր, զարդարում են տոնածառը, սենյակները, բակը:

Դադար 1. Հարց 1.

-Երեխաներ,իսկ դո՞ք ձեր տանը ինչպես եք նշում Նոր տարին:

Դուք գիտե՞ք ,որ Նոր տարին անվանել են նաև Կաղանդ,Նավասարդ,Ամանոր:

Դադար 2. Հարց 2.

-Տարվա ո՞ր եղանակը պիտի լինի կամ գա, որ տոնենք Նոր տարին:

-Երեխաներ,երբ են նշում Նոր տարին ,Ամանորը. ո՞ր ամսին,ամսվա ո՞ր օրը

Նոր տարին,Ամանորը մենք նշում ենք հունվարի մեկին:

Շատ շուտ Ամանորը,ինչպես արդեն ասել էի,կոչվել էր Կաղանդ ևայն նշել են մարտի 21-ին
'գարնանը:

Իսկ Նավասարդը նշվել է օգոստոսի 11-ին 'ամռանը:

Ֆիզ դադար Հարց 3.

-Ի՞նչ է տոնածառը:

-Ինչպե՞ս և ինչո՞վ եք զարդարում տոնածառը:

-Իսկ եթե տոնածառի խաղալիքներ չլինեն ինչո՞վ կզարդարեիք:

Իսկ դուք գիտե՞ք,որ շատ շուտ ' իմ տատիկներն ու պապիկները ,տոնածառը զարդարել են
մրգերով,չրերով,ընկույզիներով:Թելի վրա կապել են դրանք և կախել տոնածառին:

Տնօրենի դիտարկում

Դաստիարակի կազմակերպած պարապմունքի արդյունքում կարող եմ ասել ,որ նա
հասավ իր նպատակին:Աշխատանքը նպաստեց երեխաների ինքնուրույն միևնույն
ժամանակ համախմբվածության դրսևորմանը :Նպաստեց երեխաների բանավոր խոսքի
զարգացմանը ,բառապաշարի հարստացմանը,հուզական,իմացական,ֆիզիկական,

ինտելեկտուալ ակտիվության: Նպաստեց երեխայի բարոյական, մտավոր, գեղագիտական դաստիարակությանը: Երեխաները իրենց տարիքային առանձնահատկությունների համապատասխան իմացան հայկական տոների և ավանդույթների կարևորության մասին, որպես ազգապահպան գործոն: Քանի որ առջևում Ամանոր է, ուստի դաստիարակն ընտրելով Ամանոր թեման փորձեց բազմակողմանիորեն այն ներկայացնել երեխաներին: Եվ նա հասավ իր առջև դրված նպատակին :

Կարևորում եմ դաստիարակի կողմից ընտրված թեման ,քանի որ տոնական հանդեսների ու ծեսերի կազմակերպումն ու անցկացումը մանկապարտեզում տարվող աշխատանքի կարևոր մասն է:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով ուսումնասիրելով թեմայի վերաբերյալ տեսամանկավարժական գրականությունը և կարարելով հետազոտական աշխատանք ես կատարել եմ հետևյալ եզրակացություններ.

1. Արվեստի տարբեր ճյուղերի համատեղումը տոնական հանդեսների ու ծեսերի ժամանակ ներգործում ազդեցություն է ունենում երեխայի զգայական աշխարհի և գիտակցության զարգացման վրա:
 2. Տոնական հանդեսների նախապատրաստումն ու կազմակերպումը մեծապես նպաստում է նախադպրոցական տարիքի երեխայի բարոյական դաստիարակության գործին:
 3. Հետազոտության արդյունքում պարզվեց, որ բոլոր երեխաների վրա պարապունքն ունեցավ դրական ազդեցություն:
 4. Պարապունքի ընթացքում երեխաների 60% -ը դրսևորել են բարձր ակտիվություն, 30% -ը միջին, 10% -ը ցածր ակտիվություն:
 5. ազգային տոների և ծեսերի կազմակերպման կրթական գործընթացի արդյունքում ձևավորվում և զարգանում է .
- ✓ Ինքնուրույնություն
 - ✓ Համախմբվածություն
 - ✓ Հետաքրքրություն
 - ✓ Բանավոր խոսքը,բառապաշարի հարստացում
 - ✓ Հուզական ակտիվությունը
 - ✓ Ինացական ակտիվությունը
 - ✓ Ֆիզիկական ակտիվությունը
 - ✓ Ինտելեկտուալ ակտիվություն
 - ✓ Արմատավորվում է ազգային տոները,ծեսերը,ավանդույթները

Վերհիշյալը շատ կարևոր է և երեխայի ընդհանուր զարգացման և հայեցի դաստիարակության տեսանկյունից:

Ես կցանկանայի ,որ դաստիարակները հաճախակի խոսեն և կազմակերպեն ազգային տոներն ու ծեսերը,որպեսզի երեխաների մոտ ավելի ամրապնդվի և արմատավորվի մեր հայկականը:Չէ որ պետք է պահենք ու պահպանենք մեր ազգային մշակույթն ու ավանդույթները:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Գ. Գինոսյան <<Ազգային պարեր>>
2. Ա. Սարգսյան <<Ազգային տոներ>>
3. Հ. Խառատյան <<Հայ ժողովրդական տոները>>
4. Ռ. Հարոյան. «Զատիկ», Երևան, Շաղիկ, 1966թ.
5. Апполонова Н.А. Приобщение дошкольников к русской национальной культуре / Н. Апполонова // Дошкольное воспитание, – 1991. – № 4.
6. Архарова Л.И. Воспитание на народных традициях / Л.И. Архарова // Воспитание патриотизма, дружбы народов, веротерпимости. Материалы Всероссийской научно-практической конференции (Москва, 16-17 ноября 1999).

Հղումներ

- <https://rimarstakyan.wordpress.com/2020/02/15/%D5%B0%D5%A1%D5%B5%D5%AF%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6-%D5%AE%D5%A5%D5%BD%D5%A5%D6%80%D5%A8/>
- <https://dpir.mskh.am/hy/node/778>
- https://hy.wikipedia.org/wiki/%D4%B1%D5%B4%D5%A1%D5%B6%D5%B8%D6%80%D5%A8_%D5%80%D5%A1%D5%B5%D5%A1%D5%BD%D5%BF%D5%A1%D5%B6%D5%B8%D6%82%D5%B4
- <https://www.youtube.com/watch?v=HfB1nU3FVx8>